ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի մարտի 27-ին:
Նիստին մասնակցել են հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում
3. 8-րդ դասարանում հայրենագիտություն առարկայից «Բնության հուշարձաններ» անվանումով նախագծային աշխատանքի արդյունավետության քննարկում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
4. Գարնանը նախատեսված էքսկուրսիաների իրականացում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
5. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշ - ցերեկույթի պլանավորում և անցկացում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
6. Սովորողների առաջադիմության և ԱՈՒՊ-ների քննարկում՝ ապրիլի վերջին կայանալիք ծնողական ժողովների շրջանակում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)

Լսեցին՝

1. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց մարտի 27-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 6 հարցից:

Լսեցին՝

2. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ նախորդ նիստի որոշումները կատարվել են, ըստ այնմ՝ սահմանված պլանով և ժամանակացույցով դասարաններում իրականացվել են դասալսումներ: Վերլուծության արդյունքում պարզել է, որ այն դասարաններում, որտեղ սահմանված էր իրականացնել առարկայի դրվածքի ուսումնասիրությունը, արձանագրվել է հետևյալը. դասալսված բոլոր ժամերին ուսուցիչները ներկայացել են օրվա դասի պլաններով: Դիտարկվել է ակտիվ և համագործակցային մեթոդների կիրառում, ինչը նպաստել է աշակերտների ներգրավվածության բարձրացմանը: Ուսումնասիրված բոլոր դասերին կիրառվել են ցուցադրական նյութեր, խելամիտ հարմարեցումներ: Իսկ այն դասարաններում, որտեղ նպատակ էր դրված ուսումնասիրել դասի բովանդակության համապատասխանությունը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին, արձանագրվել է, որ դասի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին: Ուսուցիչները շեշտադրել են ոչ միայն գիտելիքի փոխանցումը, այլև կարողունակության ձևավորումը, ուսուցիչները փորձել են ապահովել դասի բովանդակության հասանելիություն՝ կիրառելով տարբերակված ուսուցում:

Լսեցին՝

3. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց, որ ավարտվել է 8-րդ դասարանում հայրենագիտություն առարկայից նախագծային աշխատանքի իրականացումը: Նախագծի նպատակն էր ձևավորել գիտելիքներ բնության հուշարձանների

մասին, կարողանան տարբերել բնական, պատմական, ջրաբանական հուշարձանները: Վերջնարդյունքում սովորողները իմացան բնության հուշարձանների մասին, տարբերեցին բնական, ջրաբանական և պատմական հուշարձանները և, որպես արտադրանք (պրոդուկտ), պատրաստեցին պաստառ:

Լսեցին՝

4. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը նշեց, որ արդեն իրականացվել է գարնանը նախատեսված էքսկուրսիաների մի մասը, 7-րդ դասարանցիները տիկնիկային թատրոնում դիտել են «Երեք խոզուկները» ներկայացումը, իսկ 9-րդ դասարանցիները ապրիլի վերջին կիրականացնեն էքսկուրսիա դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Լսեցին՝

5. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց, որ նախատեսված է իրականացնել հուշ-ցերեկույթ՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Լսեցին՝

6. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը, նշեց, որ ապրիլի վերջին կայանալիք ծնողական ժողովների ժամանակ կքննարկվեն նաև սովորողների առաջադիմության հարցերը՝ ըստ ԱՈՒՊ-ի:

Որոշում է

1. Հաստատել հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի 2026 թվականի մարտի 27-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել առարկայական մասնախմբի ղեկավարի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ հարմարեցված գիրք-տետրերի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են ԱՈՒՊ-ների երկամսյա քննարկումների ընթացքում և արձանագրվել համապատասխան ձևաթղթերում (Ձև 4): Սովորողների կրթության արդյունավետության բարձրացման նպատակով մասնախմբում քննարկվել և հաստատվել է անհրաժեշտ գիրք-տետրերի ցանկը, որը կազմվել, կցվել է արձանագրությանը և ներկայացվել տնօրինությանը՝ դրանց ձեռքբերման գործընթացը կազմակերպելու համար:
3. 8-րդ դասարանում հայրենագիտություն առարկայից «Բնության հուշարձաններ» անվանումով նախագծային աշխատանքը համարել արդյունավետ: Ուսումնական նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվությունը ներկայացնել տնօրենին, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) ներկայացնել էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին հանրայնացման նպատակով:
4. Շարունակել գարնանային էքսկուրսիաների կազմակերպումը՝ ապահովելով դրանց իրականացումը սահմանված պլանին համապատասխան և ուսումնական նպատակներին համահունչ: 9-րդ դասարանի սովորողների այցը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր իրականացնել նախատեսված ժամկետում՝ ապահովելով համապատասխան կազմակերպչական և կրթադաստիարակչական բաղադրիչները:
5. Հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի անդամները ընդունեցին ի գիտություն և պարտավորվեցին նշված ժամանակահատվածում իրականացնել հուշ-ցերեկույթը:

6. Առարկայական մասնախմբի անդամներն ընդունեցին ի գիտություն և պարտավորվեցին ապրիլի վերջին կայանալիք առցանց ծնողական ժողովի ժամանակ քննարկել և ներկայացնել սովորողների առաջադիմության հետ կապված հարցերը՝ ըստ ԱՈՒՊ-ի:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Հ. Փիրումյան**

Քարտուղար՝ **Ա. Օհանյան**

31.03.2026